



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՈՒՄԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՌՈՒՄԻՆ ՇԱՐԱԹ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1875

ԹԻԻ 1024

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հէրսէկովինէն հասեալ լուրքն հակասական են կամ չինձու . այս պատճառաւ ողջամիտ հասարակութիւնն սկսաւ հաւատ չընծայել հեռագրոց, որք Ռաիսուղայէն, Պէլիբատէն և Ակրամէն կը յուղարկուին ծանուցանելով թէ ապստամբ շարունակ յաղթութիւններ կը տանին . մինչդեռ ընդհակառակն օսմանեան զօրաբանակը՝ որոյ թիւն 100,000ի չափ է այժմ, ուր որ պատահեցաւ թշնամիոյն, հալածական ըրաւ զնա :

Փարիզի Լը Թան օրագիրն կըսէ թէ 'ի նպատակ այս ապստամբութեան հասած լուրերն՝ գրեթէ ամենքն սուտ կամ խաղաղութեալ են, «վերջին օրերս» կը յաւելու նոյն թերթն, հեռագիր մի կը ծանուցանէր թէ ապստամբք՝ ('ի մէջ զանազան պայմանաց զորս կառավարկէին՝ մեծ տէրութեանց կողմանէ յուղարկեալ հիւպատոսաց) կը պահանջէին որ Դրէպլին քաղաքին մէջ պաշարելոց ուսուիրէն օրըստօրէ տրուի : Մինչդեռ հաւաստի կերպիւ գիտեմք թէ Դրէպլին պաշարեալ է . քանզի անգղիացի թղթակից մի որ նոյն քաղաքէն կը գրէ, այնտեղ եղած օսմանեան բանակի մը այցելութիւն ըրաւ, որ 4000 հոգիէ բաղկացեալ է :

Վէնայէն անցեալ ամիս 16—28էն յուղարկեալ հեռագիր մի՝ զոր կը հրատարակէ Լոնտոնի Տէլէ—Ել— օրագիրն, կը ծանուցանէ թէ Բարձրագոյն Դուռն չը շարեւերական նամակ մի յուղարկեց մեծ տէրութեանց, գանգատելով թէ Սրբի և Գառատաղի կառավարութիւնքն շարունակ կը ընդհարարեն զէջդութիւնն . և թէ այս ընթացքը շարունակուելու որ լինի, հարկաւ զինուորական ընդհարում մի տեղի պիտի ունենայ :

Բայց մեք չեմք կրնար հաւատալ որ՝ Սրբի և Գառատաղը՝ զինի պաշտօնական յայտարարութիւն ընդունելոյ 'ի կողմանէ մեծ տէրութեանց թէ միաբան հաւանութեամբ որոշեալ են օգնութիւն չմատուցանել նոցա, համարձակին շարունակել իրենց ապօրինաւոր ընթացքը : հե-

տեարար ապստամբք միայնակ և տնօգնական մնալով, պիտի պարտաւորին զէնքը թողուլ կամ փախչել, մանաւանդ 'ի մերձեցաւ ձմեռան . յորում՝ ձիւնապատ լեռինքն ապստամբարան չեն կրնար լինել նոցա :

Բարձրագոյն Դուռն հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնն հրատարակեց, որ մարդասիրական տնօրէնութիւններ կը պարտենակէ :

«Օգոստոս. Սուլթանին բարձրագոյն խնամքն և Նորին անպառա մարդասիրութիւնը կը տարածի՝ առանց խտրութեան, իւր ամեն հպատակաց վերայ . միայն նոքա՝ որք կը խոտորին 'ի շաւղէն զոր հպատակութեան պարտքը գծած է նոցա առջև, և որք պարտազանց կը գտնուին ընդդէմ օրինաց, նոքա միայն պիտի զրկուին վայելելու կայսերական բարեարութիւնները, և յանցանքն՝ իրենցն պիտի լինի :

«Նորին վահափառութեան մարդասիրական խնամքը վերստին կը յայտնուի այժմ 'ի նպատակ երկրագործ ժողովրդոց, որք կայսերութեան ամենէն պարկեշտ և խաղաղասէր բնակիչքն են, Արդ՝ նախ և առաջ վճռեցաւ որ այս ժողովուրդքն անմիջապէս ազատ լինին 'ի վճարելոյ գլուխը առնուած քառորդ տուրքն տասանորդին, որ հաստատեալ էր յառաջագոյն : Այլև հարկերուն (վերկի) ամեն մասը որքն՝ որք կուտակեալ են մինչև ցամա 1289 Հէճիրին, բաշխուեցան նոցա . հետեւեալ հրաման տրուեցաւ որ կայսերական գանձուն տուժարաց մէջ ջնջուին յիշեալ մնացորդ պարտուց արձանագրութիւնքն, և որ շուտով պիտի հրատարակուի : Այս մարդասիրական կարգադրութեան 'ի բաց հանեալ են տասանորդաց վարձաւորներն (միւլթէ-զիմ), երաշխաւորքն և բարեկեցիկ դասքն (երկրագործաց) վասն պարտուց իւրոց առ կայսերական գանձն :

«Ձանազան հասարակութիւնքն ներկայացուցիչներ պիտի ունենան գաւառաց վարչական խորհրդարանաց մէջ, և զայս ներկայացուցիչ-

ներն հասարակութիւնքն պիտի ընտրեն այն անձանց մէջէն, որք կատարելագոյն կը վայելեն զվստահութիւն իւրեանց : Սոցա ըրած դիտողութիւնքն՝ երբ օրինաց և ուղիղ բանի դէմ չեն, ծանր նկատողութեան պիտի առնուին :

«Այն սկզբունքն, որով պատգամաւորութիւն մի վիճայէ թնեւորուն հիմնական օրինաց համեմատ 'ի Կ. Պօլիս պիտի երթայր՝ գաւառաց տարեկան ընդհանուր ժողովոց խնդիրներն ներկայացնելու համար, և որ ժամանակէ մի 'ի վեր թող տրուած էր, այն սկզբունքն վերստին 'ի գործ պիտի դրուի : Պատուաւոր անձինք, որք իրենց փոխադարձ հասարակութեանց յարգն և համարումը կը վայելեն, պիտի կոչուին վիճայէ թնեւորէն և միւլթէսարիֆութներէն . ոչ բազմութիւն, այլ փոքրիկ խմբակօք : Թէ այս միջոցաւ և թէ ուրիշ կերպիւ 'ի ձեռս բերեալ տեղեկութիւնքն՝ իբրև հիմունք պիտի բռնուին բարեկարգութեանց, որք 'ի գործ պիտի դրուին աւելցնելու համար զբարեկեցութիւնն, զբարօրութիւնն և զընդհանուր յառաջադիմութիւնն :

«Յատուկ գործակալք և քննիչք պիտի նշանակուին, ըստ պահանջելոյ հարկին, ապահովելու համար զբաժանումն և զհաւաքումն հարկաց (վերկի) ըստ հաստատեալ օրինաց և համեմատ կանոնաց արդարութեան :

«Արդէն պատուէրներ յուղարկեցան բոլոր վիճայէ թնեւորուն վասն գործադրութեան այս տնօրէնութեանց :

«Առայժմ խորհրդակցութիւն և քննութիւն կը լինին հաստատելու համար նոր դրութիւն մի հաւաքման տասանորդաց 'ի վերայ կալուածոց, հիմնեալ արդարութեան վերայ այնպիսի կերպիւ՝ որ ժողովրդոց գոհունակութիւնն ապահովուի : Բաց յայտմանէ 'ի մասին հարկաց հոգեւորութիւն գտանել գանձային միակերպ եղանակ մի : Որոշուեցաւ հետզհետէ 'ի գործ դնել այս բարեկարգութիւնքն, ինչպէս նաև զբարեկարգութիւնն որ հեծեալ գոռնդ պահապան զօրաց կազմակերպութեան կը վերաբերի :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՂԿԵՐԵՂ

Իլիակաւար կենսագրութեան օրագրան Հայրապետի Ներսիսի Ե. վեցսփառ եւ ազգասէր կաթողիկոսի ամենայն Հայոց :

(Շարունակութիւն : Տես թիւ 1023

Ներսէս՝ երգոյ ունկնդներոյ միջոցն կամտազեր շարագրել տալոյ ժամանակն ևս չէր մոռնար՝ թէ կայ Հայոց Հայրապետն կաթողիկոսն Դանիէլ ի բանտի արգելական, և թէ Էջմիածինն է ի տառապանս ի ձեռս Դաւթի . այնքան աղերսագիր մատուցանել տուեց Եփրեմին ի դիմաց բանտարկեալ Դանիէլի առ կայսերական Դուռն Ռուսաց, որ կայսրն հրամայեց վրաստանի կուսակալ Յիցիանովին երթալ յերևան, աղատել զԴանիէլ և բազմեցուցանել յաթոռ Հայրապետական : Յիցիանով սակաւաձեռն զօրք գնաց Գանձակայ վերայ, Զաւաթ խանն ել զօրութեամբ Պարսից ընդդէմ Ռուսաց, պատերազմեցաւ, յաղթուեցաւ և փախաւ մոտ բերդն : Ռուսաց զօրքն պաշարեցին Գանձակն, և սկսան գնդակոծ առնել : Պարսից Արիֆէի գիշերն որ մեծ բայրամ էր, մինչ ի լոյս պատերազմեցան . լուսացաւ Յունկարի երեքն 1804 ամի, քաղաքն առնուեցաւ : Այս պատերազմի

մէջ վերք ընկալաւ կոմս Վորոնցովի որդին Միքայէլ Սեմենովին որ դեռ ևս իւնքեա էր, և հիւանդ պառկեցաւ Ներսիսի խցի մէջ Էջմիածին, որք՝ այն օրէն բարեկամացան, և մինչև ի մահ բարեկամ մնացին :

Յաթ Ալի շահն լսելով որ Գանձակ առնուեցաւ և Զաւաթ խանն սուլթանաւոր մեռաւ, եկաւ Երևան, հանել տուեց զԴանիէլ բանտէն, և կամեցաւ ըստ թելադրութեան Դաւիթ կաթողիկոսի՝ առ Յիցիանովին առաքել պատգամաւոր հաշտութեան . և յորժամ Դանիէլ չլիանձն առնայր, կը հրամայէ տանիլ յաքսորս ի Մարազայ . ուր և մնաց մինչև ի 1803 ամի : Դաւիթ կաթողիկոսն ժամ դիպուկ համարելով՝ գանձ բազում բերել տուեց Գրիգոր արքեպիսկոպոսէն, և ձեռամբ Մելիք Աբրահամի կաշառաբեկ առնելով Շահի չըջապան եղեալ խաներու և Բէգերու բազմութիւնն, հրաման հանել տուեց Շահէն առ Մարազայի խանն որ Դանիէլի կեանքն բառնալ տայ : Սորա աղագաւ լացել էր երգաբանն այս չորս տող երգով .

Կամակից են եղեանութեան չիք Գրիգորն այն որ յաքսորման .

Մելիք Աբրամ ծեր Շուշանեան, և այլք որ են մտօք ունայն :

Լսուել էր այն ժամանակն ի 1804 թուին ի Տփլիս և ի բազում տեղիս, և Պէրպէտեանն ևս կը լիջէ իւր հարիւրամեծի Հայոց Պատմութեան մէջ, թէ երբ խանն ուղարկել է Գահիճ

ի բանան մահ տալ Դանիէլին, գահիճն տեսել է՝ որ Դանիէլի մօտ նստած են երկու առիւծք . զարհուրանօք փախել է, և եկել պատմել խանին : Խանն անձամբ գնացել է, և տեսել է նոյնն, վասնորոյ պատուով հանել է բանտէն զԴանիէլ և մի հայազգի մեծատան գերդաստանի մէջ անդորր բնակութիւն է տուել : Հայրս՝ այս լսել էր ի բազմաց, բայց աւելի կարեւորութիւն չէր տուել այս լրոյն, մանաւանդ գեղարդակիրն, և Գրիգոր Պատրիարքն և այլ երեւելիք ի Դանիէլականաց : Կասն եղել է, թէ այդ Ներսիսի հնարագիտութիւնն է, որ կարողացել է հրաշագէտ կիւսահմայ Պարսից դիւրահաւանութեանն օգուտ քաղել : Այնուհետև Ներսէս եկաւ Վսրոնցով կոմսի որդւոյ հետ Տփլիս, և որովհետև ժանտախտի պատճառաւ Սերոբէ Պատկանեան գնացել էր Մուխրան, նա ևս գնաց և անդ շտապարել տուեց Սերոբէ վարժապետին այն երգն, «Սրահար եղեր չար իշխան՝ թշնամի խաչին Զաւաթ խան» : Որոյ վերջին տունն է . Ծագէր լոյս տասին Յունկարի, հազար ութ հարիւր չորս ամի, մինչ զսոյն երգաբանեցի, ըստ ձայնին Ուսումարթլօպի, որ է երգ մի վրաց :

Ներսէս չչատացաւ այսու, այլ աղաչեց որ Սերոբէ վարժապետն նոր ի նորոյ և ընդարձակ փոքր ինչ երգէ Գանձակայ առումն . և նա գրեց այն գիմնական երգն . Ընդէր է քեզ կատկա՛ծ կրել, կամ զՈւսաց գալն ի միտ բերել և այլն, որոյ ի վերջին տուն կասէ, ի ծագել և

«Աստուածային Նախախառնութիւնն երկար օրեր չնայելէ մեր օգոստոսիս ու զհասնն Սուրբ Թանին ի փառս կայսերութեան և ի բարօրութիւն հպատակաց իւրոց»:

Կ. Պօլիս, պաշտօնատուն տպագրութեան
21 Սեպտեմբեր 1875:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

Հետեւեալ յօդուածը՝ որ Օգոստոսի առջի օրերն գրուած է Հայ կենցաղագէտ բարեկամէ մի, զանազան պատճառներով չատ ուշ հասաւ ձեռքերնս: Այսու ամենայնիւ մտածելով թէ նոյն յօդուածոյն պարունակութիւնն կրնայ միշտ օգտակար լինել մեր ընթերցողաց, կըփութամք սիրով հրատարակել զայն:

Եւրոպական քաղաքականութիւնն տարւոյս այս եղանակին մէջ սովորաբար հանդարտ է: Պաշտօնային ազգային խորհրդարանն արդէն այսօր վերջ տուաւ իւր գործառնութեանց: Անգղիոյ բարլամէնթն քիչ օրէն նոյնը պիտի ընէ: Հետեւաբար նշանաւոր քաղաքական լուր մի չկայ որ ձեզ հաղորդեմ: Եթէ իսկ լինէր՝ փառք երեք տրականութեան, պիտի իմանայիք գրեթէ մի և նոյն ժամանակ ինչպէս մեք:

Սակայն եթէ այս տողերը կ'ուղղեմ ձեզ, կուզեմ մասնաւոր անցքի մի վրայ խօսիլ՝ որ հետաքրքրական կրնայ լինել մեր ազգայնոց համար:

Արդ Յուլի 22ին Անգղիոյ բարլամէնթին մէջ տեղի ունեցած անցքը մեծ նշանակութիւն ունէր բոլոր Բրիտանիայի համար: Կառավարութեան առաջին պաշտօնեայ մտար Տիգրայէի իմաց տուաւ հասարակաց խորհրդարանին, որ ի պատճառս զանազան գործառնութեանց՝ որպէս և իսկ սղութեան ժամանակի՝ անկարելի պիտի լինի վճարական և առօրեայ նկատմամբ քննութեան խնդիրն վճարանութեան առնուլ բարլամէնթի այս տալուան նիստերուն մէջ, և թէ այն խնդիրն հետեւեալ քարտէսն նիստերուն թողուլ պիտի պարտաւորի:

Կառավարութեան այս որոշման դէմ մտար Բլիմզլ բարլամէնթի անդամ բոլորովին զայրացած խառնակաւ ընդդէմ, և իւր խօսքը կառավարութեան առաջին պաշտօնէին ուղղելով զինքը պատասխանատու ընել սպառնացաւ հազարաւոր նաւատիրներու մահուան համար:

Վաճառականական նաւերու համար մասնաւոր օրէնք մի չլինելով, ըսաւ մտար Բլիմզլ, նաւերու տէրերն չահու նպատակաւ խիղճ չեն ընել, և Աստուծոյ չեն վախնար հին և փոքուն նաւերն

րից Բուլվարի, հազար ութ հարիւր չորս ամի, ութերորդ սքանչելիք գործի, անդրանցեալ զեօթեամբք աշխարհի: Եւ այս այն պատճառաւ ութերորդ սքանչելիք կրկնէ, որովհետեւ Նաւիր Ծահն մինչ միապետէր՝ երկերիւր հազարօք չըլէր, զգանձակ առնուլ չըօրէր: Վասնզի տնաւիկ բերդ էր: Ներսիսի Սերոբէի յետեւէն ի Մուխրան երթալն ունէր առանձին շարժառիթ: Եւ փրեմ արքեպիսկոպոսն՝ որ Սերոբէին յոյժ հարեանցի կրճանալէր, բայց նորա հօրն և պապուն քաջածանօթ էր, նորա գրիչն սիրելով՝ կամեցաւ իւր մօտ ունենալ: Բայց Սերոբէն չկամեցաւ երթալ, և ոչ նորա բարեկամք խորհուրդ տուին: մանաւանդ տէր Առաքելն, որ ընդ փոյթ զիւր որդին տէր Մելքիսեդեկն ուղարկեց: Էանց այլ ևս ամ մի կամ երկու, դատրձեալ հրաւեր գրեց Սերոբէին: առ այս նուագ գրել էր և Ներսիսին, որ Սերոբէի կամքն համոզէ, և ուղարկէ: Երբ Ներսէս գնաց Մուխրան տեսաւ որ Սերոբէն շարագրել է ի վերայ հընգեկի հարուածոցն Տիխիսայ այս երգն, «Սարսափելի բարկութիւն Տեառն մինչ մեզ հասանէր»: Որոյ ի վերջին տանն ասած էր: Էր հազար ութ հարիւր և չորս՝ օրն նոր տարի, մինչ ի տղմուտ Մուխրանի կարծոյ զայն յայտ արարի: Եւ փրեմ նոյն գրել էր և առ երեւանցի աւագ վահրամեանն, որ նա ևս համոզէ Սերոբէին գալ ի Ռուսաստան: Աւագ վահրամեանն ևս ձայնակից եղև Ներսիսին, և երկուքին ի բազում ժամանակս անդադար յորդոյ կըմտուցանէին Սեր

ոյ յերու պայքարեցնել: որուն հետեւութիւններն են որ ամեն տարի բազմաթիւ նաւեր կըկորսուին, և մեր քաջ նաւատիրներն կըզոհուին թէպէտեւ նաւու տէրերն ի շնորհս ապահովութեան ընկերութեանց կըհարստանան: Այս ապիրատներն են պատճառ որ հազարաւոր որբեր և այրիներ կուենեամք ամեն տարի: ուստի պիտի բողոքեմ և չպիտի լռեմ բնաւ մինչև որ այս ապիրատներն մատնանիչ ընեմ: այս ապիրատներն՝ որ այս բարլամէնթին իսկ անդամ են:

Մտար Բլիմզլ բարձր և հզօր ձայնիւ այս խօսքերն արտասանած ժամանակ՝ խորհրդարանի մէջ ահագին յուզում մի տեղի կուենայ: անդամք կըբողոքեն և ամեն կողմանէ ի կարգ չկողմանէ:

Սերքը՝ որուն պաշտօնն է ի կարգի ունել խորհրդարանը, իւր սովորութեանն համեմատ ծանր և հանդարտ ոգով դիտողութիւն կընէ մտար Բլիմզլն որ իւր արտասանած բառերն բարլամէնթի կանոնաց դէմ է, և կըյուսայ որ իւր բառն արտասանելով խորհրդարանի անդամոց ուղղել չէ իւր դիտաւորութիւնն:

Մտար Բլիմզլ բողոքովն այլալաժ, իւր նստարանն կըթողու առաջ կըգայ ու Սերքին ուղղելով իւր խօսքն, Այո՛ խորհրդարանիս մի քանի անդամոց ուղղեցի նոյն բառերը, և կիմանամ որ ըսածս ետ չպիտի առնում:

Բարլամէնթն տակնուվայ կըլինի Բլիմզլի այս յամառ կացութեան առջև: Սերքը երկրորդ և երրորդ անգամ կառավարիէ անոր՝ իւր արտասանած բառերն ետ առնուլ, իսկ նա սաստիկ գրգռուած երբ կրկին կըյաւառի և բացասական կըպատասխանէ: Սերքը խորհրդարանի որոշման կըթողու գործը, և կառավարութեան առաջին պաշտօնեային առաջ կուլթեան համաձայն մտար Բլիմզլ կըհրաւիրուի խորհրդարանէն հեռանալ: . . .

Լորտ Հարտինկլին՝ դիմագիր կուսակցութեան գլուխ, ինչպէս նաև խորհրդարանի ուրիշ անդամներ մտար Բլիմզլի ջատագով կըկենան, անոր այսչափ ժամանակէ ի վեր վաճառականական նաւուց խնդրոյն համար ունեցած հոգն և ըրած զհոգութիւններն մէջ բերելով և անոր գրգռեալ վիճակն յիշեցնելով՝ կառավարիէն որ խորհրդարանն ասոնք նկատողութեան առնելով ներողամիտ լինի անոր: Հուսկ յետոյ խորհրդարանն կորոշէ՝ եօթն օր ժամանակ շնորհել մտար Բլիմզլի՝ որպէսզի հետեւեալ հինգշաբթի օրն խորհրդարանն ներկայանալով ներողամտութիւն խնդրէ:

Բլիմզլ կըմեկնի խորհրդարանէն մի քանի օ

րորէին երթալ առ Եվրեմ: Վերջապէս Սերոբէ Պատկանեան յոժարեցաւ: Այս միջոց Ներսէս անդադար երթեալ կանէր յէլմիածին և յերեւան և ի թիֆլիզ և ի Մարագայ, ուր ամենայն Դաւթեանք և Պարսիկք նորա մահն իբրև զսմտուցեալ Աստուծոյ ի հօտ անուշից կըհամարէին, և յատկապէս Ծահն և Արքայորդին և երեւանայ Սարգարն և ամենայն մեծամեծք Պարսից՝ Ներսիսի անունն առատելութեան Նուրսուզ կըկոչէին, և ուր ուրեք գտանէին՝ պիտի սպաննէին:

Առ վերջին աւուրս 1805 ամի, մինչ Սերոբէ վարժապետն արդէն պատրաստուել էր յուղի անկանիլ, Պետերբուրգէն մէկ ոտանաւոր բերին, որպէս թէ աղայ Մարգարայ Զաքարեան խոջնցի շարագրած: Բայց Ներսէս բազում ամօք յառաջ քան զայն տեսել էր և ընթերցել ի Պօլիս, և Սերոբէ վարժապետն ևս յետ դառնալոյն ի վանայ սրբոյն Ղազարու և ի Թրեստէ, նոյնպէս հանդիպէլ էր և կարդացել: որոյ սկըսուածն էր: Արի անձն իմ մեկուսացիր ի բազմութեանց այս հեռացիր, զի ժամանակն է այլալաժ, զուտ բարեկամ չմնաց:

Ներսէս վարժապետն և վահրամեան Աւագն սկսան ստիպել Սերոբէ վարժապետին, որ նա այն ոտանաւորի հակառակն գրէ: Սերոբէ վարժապետն բացէ ի բաց հրաժարեցաւ, և նշով իւր և երգմամբ ևս հաստատեց՝ որ այն ոտանաւորին հակառակ գրել բնաւին չիյոժարիր, մանաւանդ ոյն պատճառաւ, որ աղայ Մարգա

րէն մեծ յաղթանակաւ հոն մտնելու համար: Այս տարօրինակ դէպքն հազիւ հազ հազ կաց խորհրդարանին մէջ տեղի կուենայ: հաւաստիկ անոր արձագանգն բոլոր Անգղիոյ կըտարածուի: Ժողովուրդը կըգրգռուի կըբողոքէ, հասարակաց կարծիքն իւր ձայնը կըբարձրացնէ: Լոնտոն, Պրիմիլմ, Մէնչէթը, Լիւն Լիվըրուլ, Շէֆիլտ, Պրատֆօրտ, Նօթինգհեմ, Երեւելի քաղաքներու մէջ զինքնուկուենան, ուր հազարաւոր ժողովուրդ մարեալ կառավարութեան դէմ կըբողոքէ: նոյնին՝ վաճառականական նաւուց խնդրոյն կատմամբ ունեցած ընթացքը կըպահարկէ: Մտար Բլիմզլի համար չեմ համակրութիւն կ'ուայայտեն, անոր անվհերք քաջութիւնն և դասիրական զգացմունքն կըգովեն, որ և ընտրեց խորհրդարանէն հեռանալ, քան ի սովորութիւնը ծածկել:

Անգղիոյ ամեն կողմէն համակրական նաւեր, հեռագիրներ կըհասնին մտար Բլիմզլին: ամեն կողմն համակրական և սիրոյ արտայայտութիւններ կըլինին անոր համար: Նաւատիր գինքը իրեւց բարերարն կանուանեն: . . . Ֆիլիսի գործաւորներն հանդանակութիւն կըլաքեն իրենց մէջ և 110 լիւայի նուէր մը նեն մտար Բլիմզլի, անոր յօգուտ հասարակացուցած վեմ զգայմանց համար:

Ո՛հ գործաւորն՝ որչափ ուղիղէ նորա բնագումն: նա գիտէ և ճանաչէ իւր բարեկամը: . . . Ինչ որ թագականերու համար չընէր, պաքաղաքացիի մը համար յօժարեալ կըկոչէ: Այս տողերը ընթերցողն կըյիշէ արդեօք Հոմայի գործաւորաց անցեալ ձմեռ դիւցանի րիպալտին ըրած ընդունելութիւնն: Երբ Հոմով հասաւ ժողովուրդն անոր կանքն: Երբ հանելով ինքն վարեց կառքը աշխարհ ամենէն մեծ քաղաքացւոյն: . . .

Արդ Բլիմզլ որ առջի օրն կարեւրէր վերաւուած տրտում և տխուր հասարակաց խորհրդարանէն կըհեռանար, երկրորդ օրն դիւցանի եղած էր և իւր անունը բոլոր Անգղիոյ մէջ հռչակուէր: Բլիմզլ երջանիկ էր, քանզի հաւրակաց կարծիքն իրեն կարեկից՝ բոլոր Անգլիոյ իրեն հետ էր: . . . և ասկէ առաւել ինչ փառք կրնար սպասել: . . .

Հասարակաց կարծիք: ա՛հ, այս է աւագայս երկրին իշխանն: իւր աղատ դրութիւններով է որ Անգղիա երեւելի հանդիսացած և աղատութեան կեդրոն համարուած է: Անգղիա՝ պթագուհին կըթագաւորէ, և ժողովուրդը ինչպէ կըկառավարէ: Անգղիա՝ ուր աւելի աղա

րն՝ որպէս ամենեցուն յայտնի էր, նորա բերարն է, երախտաւորն է, և նորա ուսման պատճառն է: և որ առաւելն է, այն ոտանաւորի մէջ չկայ ինչ հերքելի, որ ծայրէ ի ծայր ճշմարտութիւն է: Բայց հնար չեղաւ Ներսիսի կամապաշտութեան յաղթել: Երկուստեք բընադատեցին, և նա ակամայ յանձն առաւ: Երբ յայտնի ճշմարտութեան դէմ: ուր առաջ ոտանաւորն կըվերջացնէր չմնաց ասելով, աս մենայն ուրեք մնաց կասէր:

Այս օրերս պիտի դարձնել երեւանէն աւագ վարժապետի եղբայրն Գրիգոր վահրամեանն: Սերոբէ վարժապետի կիներ՝ որ յղի էր՝ մեր արդէն յերկունս: Ծնաւ նա իւր երրորդ որդի անուանեցին Պետրոս, կնքահայր եղև վարժապետ Գրիգորն: և յետ քանի աւուրց Ներսէս նոր նամակ ստանալով Սերոբէի մասին՝ ըրեմէն, չափազանց թախանձանօք ստիպեց յղի անկանիլ: Բայց Դաւթեանց մէջէն բազմակային՝ որ չկամէին՝ որ Սերոբէ անցանէ անքան զերինս կովկասու: Վասնորոյ ժողովուրդն նորա փոքրիկ վարժարանի մէջ գեղարդալի Յօհաննէս արքեպիսկոպոս, Գրիգոր Պատրիարք Ներսէս, աւագ վահրամեան, ֆիթոյեանց արքեպիսկոպոս, Զեքիմ Թաթուլ, Զեքիմ աղա (Ագաֆօն Դաւթի հայրն) և կըխօսէին, մինչ Սերոբէն թղթերն ի կարգի կըգնէր և իւր ճանապարհ պայիւսակի մէջ կըպահէր: յանկարծ Ներսիս աչքին մի թուղթ երեւցաւ, յափշտակեց թուղթն, և սկսաւ ընթերցուլ: Սերոբէ վ

տու թիւն կայ, քան որ և է հասարակաց տա-
կան երկիր մը . . .

Իրաց այս վիճակին մէջ, հասարակաց կարծե-
աց այս փառաւոր յայտարարութեան առջև
ինչ ընթացք ունեցաւ կառավարութիւնն:

Միթէ ուրիշ տիրապետական կառավարու-
թեանց պէս զօրարանակներ հանեց այս ինչ,
այն ինչ քաղաքներու վրայ, որ հասարակաց
ժողովներն արգիլեն, ու անվհեր քաղաքացի-
ներն որ յօդուտ հասարակաց կառավարութե-
դէմ կըլսօսին, ձեռքակալ ընեն բանտ դնեն:

Ոչ, կառավարութիւնը ժողովրդեան բուռն
կամացն առջև խոնարհեցաւ, հասարակաց
կարծեաց արձագանգ տուաւ . . . կառավարու-
թեան պաշտօնեայք անմիջապէս արտաքոյ կար-
գի նիստ ընելով՝ մատր Բիլմիլի վաճառականա-
կան նաւուց խնդրոյն յարաբերութեամբ՝ Յու-
լիս 23ին սըր Չարլս Ատրիլ կառավարիչէր հասա-
րակաց խորհրդարանին մէջ, որ թագուհւոյն
կառավարութիւնն հսկէ և արգիլէ վաճառակա-
նական այն նաւերը, որոնք անկարող են նաւե-
լու: Այս առաջարկութիւնը իսկոյն նկատողու-
թեան կառնու խորհրդարանն, և երեք նստե-
րու մէջ մատր վրայ հարեանցի վիճարանելէ
զկէն, օրինաց կարգը կանցին . . . մինչդեռ մի
քանի օր առաջ կառավարութիւնն անկարելի-
ութիւն կը յայտնէր նոյնը վիճարանութեան իսկ
դնելու: Այսպէս ուրեմն Բիլմիլի առաջարկու-
թիւնն կ'իրանայ, մարմին կառնու և օրէնք կը
լինի 'ի շնորհս հասարակաց կարծեաց զօրաւոր
յայտարարութեան:

Կըմնար այժմ բարլամէնթի պատիւն, զոր
մատր Բիլմիլ ոտնակոխ քրաւ՝ նորա մի քանի ան-
դամաց համար ալիքս բառ արտասանելով:
Անգղիոյ հասարակաց խորհրդարանն իւր արժա-
նապատուութեան (dignité) ստատիկ նախանձա-
խնդիր է. նորա անդամներն ձեռքի են, գոնէ
այնպէս համարուած են. ձեռքի են բառով կիմա-
նամբ պատուաւոր և ազնիւ անձ:

Արդ մատր Բիլմիլ իբրև կատարեալ ձեռքի են
բարլամէնթի վճռոյն համեմատ հետեւեալ հինգ-
շարթի Յուլիս 29ին խորհրդարանն ներկայացաւ
(Ուեսթմինսթրի պալատի չրթակայքը խուռն
բաղմութիւն ժողովրդեան կըսպասէր և հա-
մակրական յայտարարութեամբ ողջունեցին ա-
նոր գալուստը) և հետեւեալ վսեմ կերպիւ նե-
րողամտութիւն խնդրեց խորհրդարանի իւր ըն-
կերակիցներէն:

Մատր Բիլմիլի արտասանած խօսքերն բառ առ
բառ կը թարգմանեմք, որպէսզի մեր ազգայինք

տեսնեն և 'ի միտ առնուն թէ քանի նախան-
ձախնդիր լինել հարկ է հասարակաց խորհրդա-
րանի մը արժանապատուութեան համար. մա-
նաւանդ խրատ առնուն անոնք որք բաւական
տղայ են, մեր ազգային ժողովներն երբեմն
Գաղղիոյ և երբեմն Անգղիոյ հասարակաց խոր-
հրդարաններու նմանցունելու . . . Որչափ որ
էական մեծ կարեւորութեամբ մեր ազգային ժո-
ղովներն անոնցմէ կըտարբերին, այնչափ ևս
նոցա արժանապատուութեան անփոյթ և ան-
տարբեր եմք . . .

Հետեւեալ կերպիւ խօսեցաւ Բիլմիլ Սթիւքին
ուղղելով իւր խօսքը:

Հարկ չեղաւ ինձ, Տէր իմ, խորհրդարանի այս-
չափ վեհանձնութեամբ ինձ շնորհած բոլոր շա-
բաթն սպասել, համոզուելու համար թէ՛ անկա-
րելի է այս ընդարձակ երկիրը կառավարել, ա-
նոր պատիւն և ազդեցութիւնն օտարաց առջև
ինչպէս նաև խորհրդարանիս արժանապատուու-
թիւնն իրովին պահել, մինչև որ նորա բարլամէն-
թին մէջ տեղի ունեցած վիճարանութիւններն
որոշ սահմանի մէջ 'ի դործ չդրուին: Այս սահ-
մանէն դուրս ելայ ես անցեալ հինգշարթի, հե-
տեալաւ հայրենասիրութիւնն ու պարզ իմացա-
կանութիւնն կը պարտաւորեն զիս յետս կոչել
այն արտասանած բառերս՝ որոնք բարլամէնթի
սկզբանց դէմ էին: Ուստի նոյն բառերը գոր-
ծածելուս համար՝ ձեր և խորհրդարանիս ներո-
ղամտութիւնը կը խնդրեմ, Տէր իմ, ոչ իմակալ
ողւով, այլ կատարեալ մտերմութեամբ:

Արդ այսպէս ընելով, կը յուսամ, Տէր իմ, որ
դուք և խորհրդարանս իւր ներողութիւնը ինձ
պիտի շնորհէ: Վստահ եմ, որ իմ արտայայտած
ակնածութեանս հակառակ չպիտի համարիք,
երբ յաւելում նաև, որ իրաց հանգամանքնե-
րու համար քրաւ յայտարարութեանցս, և ոչ
մէկն յետս կառնում: Այժմ զիս լիովին խորհր-
դարանի կամացը կը թողում:

Մատր Բիլմիլ այս խօսքերն արտասանած ժա-
մանակ բարլամէնթի անդամք գոհունակութեան
յայտարարութիւններ կընէին: Միայն երկու
անդամք համարձակեցան դիտողութիւն ընել,
սակայն արձագանգ չունեցան. հետեալաւ խոր-
հրդարանն իւր գոհունակութիւնն յայտնելով
վերջ տուաւ խնդրոյն:

Թ. Գ. Վերջին օրերս Լոնտոնի լրագիրք կը հրա-
տարակեն որ Անգղիայի գործաւորք և նաւաւ-
տիք հանգանակութեամբ կրկնուիչ քաղաքին
մէջ մատր Բիլմիլի համար արձան մի կանգնելու
որոշումը քրաւ են:

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պօլսոյ ՀԱՅՐԵՆԻԻ Լրագիրն՝ Լը Ժուիլ 1-
իւր օրագրէն հետեւեալ յօդուածն թարգմանած
է, զոր իւրաքանչիւր Հայ անշուշտ ազգասիրա-
կան պարծանք պիտի ընթեռնու:

ՎՍԻՄՓԱՅԸ ՍԱՐԳԻՍ ՊԵՅ ՊԱԼԵԱՆ

Վերջին օրերս Կ. Պօլսոյ այցելող երեւելի ճաւ-
բորդներ կը հաղորդեն մեզ այն արուեստական
և գիտական տպաւորութիւնը՝ որով զգածեալ
են Վոսիլորի նեղուցին կրկին ափունքը շքեղա-
ցնող հոյակապ շինուածոց և պալատներուն վրայ,
և սքանչացեալ են իմանալով որ այս բովանդակ
հրաշակերտք՝ երկը և վստակք են վեհափառ
Սուլթանի անուանի ճարտարապետ և առաջին
երկրաչափ Պալեան վսեմափայլ Սարգիս պէյի,
որուն բեղմնաւոր երեւակայութիւնն և արտա-
քոյ կարգի ճարտարութիւնն հանրածանօթ է
բովանդակ կայսրութեան մէջ:

Այս տաղանդաւոր անձը պանծալի հանդիսա-
ցնող յատկութեանց մին ևս ժամանակի այն
անհաւատալի արագութիւնն է՝ որով իր հսկայա-
գործ շինուածքն կը յարուցանէ յերկրէ: Այս-
պէս Պէյլէրպէյի պալատը՝ որ գրեթէ մեր նոր
Որէնթի չափ մեծ և ճոխ է միանգամայն, քսան
և չորս ամուսն մէջ կանգնեցաւ, և եւրոպե-
քէօշկին՝ որ բովանդակ կոփածոց սրբատաշմար-
մալիոնէ քանդակագործութեան գոհար մ'է,
և որ մեր ազգային մատենադարանի ընդարձա-

կութիւնն ունի, վեց ամուսն մէջ շինուած է:

Ձոյդ ընդ այս արագ գործունէութեան,
վսեմա Սարգիս պէյ ունի նաև տնտեսութեան
և տեղական պիտոյից պատշաճ վարչական կազ-
մակերպութեան այնպիսի հազուագիւտ ձիրք մը,
որ բոլոր այս շինուածոց՝ մեր նմանօրինակ հա-
ւորակաց չենք երու եղած՝ ծախուց հաղիւ մէկ
երրորդ մասը գացած է:

Վսեմա Սարգիս պէյ ազնուապետական ամեն
դասակարգութեան աստիճանէն անցնելէն յե-
տոյ, կայսերական ամենէ բարձր աստիճանին
հասած է, և Կ. Պօլսոյ այցելու համայն վեհա-
պետք ոչ միայն ամեն կարգի պատուանշանե-
րով պնդեցին իր լայն կուրծքը, այլև միանգա-
մայն մեծապարգև մեծարեցին զնա:

Իր մարդասիրութիւնը, բարձր աստիճանը,
բարեբարոյութիւնն և իր ընտիր ազնուութիւնն
այնպիսի և այնքանի հանգամանքներ են իր տա-
ղանդին վրայ յաւելեալ, որով ամեն իրեն դի-
մելու պատիւն ունեցողներու համակրութիւնը
գրաւած է: Ոչինչ նուազ մեծարելի է նաև իր
գլխութիւնն և այնչափ լիովին ասպնջականութիւնը:

Այս պատկերն հրատարակած ժամանակինս
մանաւանդ անոր համար մեծ հաճոյք մը կը զը-
գամք, ըստորում վսեմա Սարգիս պէյ թուր-
քիոյ մէջ այնչափ բարձրապանծ հանդիսացուցած
արհեստին նախնական գաղափարքն Գաղղիոյ
մէջ առած է:

Թ. Գ. Կըլսենք թէ վեհա Սուլթանն իր առ-
վսեմափայլ Սարգիս պէյ ունեցած բարձր մեծա-
րանաց և վստահութեան նոր ապացոյց մը տա-
լու համար, Պաղտատի երկաթուղեաց շինու-
թեան ընդհանուր վերատեսչութիւնն ալ անոր
յանձնած է:

Կ. Պօլսոյ ՀԱՅՐԵՆԻՍ Սեպտեմբեր 13
տետրակին մէջ ՀՆԴԿԱԼԱՅԻՔ վերնագրով հետե-
ւալ յօդուածն կընթեռնու:

«Գանի շաբաթ է 'ի վեր' մանաւանդ այս վեր-
ջին օրերս գրեթէ ազգային ամեն թերթերու
մէջ բօթալից նամակներ հրատարակուած են,
որք Հնդկահայոց կրօնի և ազգութեան նկատ-
մամբ յաջող գաղափար մը չեն ընծայեր: Այս
առթիւ հրապարակի վերայ ձայներն, բողոք-
ներն ու տրտունջներն երթալով կը բարձրանան
և ազգային թերթերէն ալ ոմանք չափազանց,
և ոմանք ալ չափաւոր ընդուաւ մը դառնապէս
կը բողոքեն և դարմանն կը պահանջեն: Ձարմա-
նօք կը տեսնենք որ մինչդեռ Պօլսոյ ազգային
թերթերն՝ Հնդկահայոց կրօնի և ազգութեան
վերայ այսպէս տեղեկութիւններ կը տանան,
կը հրատարակեն, և շատերն իսկ աւելի յառաջ
երթալով այդ զեղծմանց պատճառներն կ'որո-
նեն, (այս կամ այն ըսելով) որ իւրաքանչիւրն
մասամբ իւրեք արդար և իրաւացի է, Արշալոյս՝
որ 'ի մտոյ տեղեկութիւն ունի նոյն վիճակին
վերայ, գլխովին անտարբեր կեցած, ոչ այս
տեղեկութեանց մին կը հաղորդէ և ոչ տրուած
տեղեկութեանց վերայ դիտողութիւն մի կընէ:
այլ ընդ միշտ սին գովեստներով գլուխ կու-
ռեցնէ»:

Կըցաւ իմք որ Արշալոյսն՝ ՀԱՅՐԵՆԻՍ տէր—խրմ-
բագիր արժա. Դիմաքսեան Հմայակ ծայրագոյն
վարդապետին փափուկ գլուխն կուռեցնէ ե-
ղեր իւր սին գովեստներով, փոխանակ որ և է
դիտողութիւն ընելու Հնդկահայոց վիճակին
վրայօք. և նորին Արժանապատուութիւնը զար-
մանօք կը տեսնէ Արշալոյսոյ այս ընթացքը:

Մեք ևս զարմանք կը տեսնեմք որ ՀԱՅՐԵՆԻՍ հան-
դէսը՝ նախ քան զլուսաւորել Հայաստանի խեղճ
ժողովուրդն՝ որոյ վերայ հարկաւ պարտի 'ի մօ-
տոյ տեղեկութիւն ունենալ թէ բողոքականու-
թիւնն օրըստօրէ նորա մէջ մուտ գտնելու վե-
րայ է, նախ քան իւր չորս կողմն եղած Հայոց
ազգային կուռներն և հանապազօրեայ երկպա-
ռակութիւնքն հանդարտեցնելու, որք 'ի վիճ
կորստեան կառաւնորդ են զգեալող Հայ ժողո-
վուրդն թուրքիոյ, նախ քան, կըսեմք, այս ազ-
գակործան մօտաւոր չարեաց դարման տանելու՝
ՀԱՅՐԵՆԻՍ հեռաւոր յոյժ Հնդկահայոց հոգը տանիլ
կը քաջանայ. որք իրաւամբ կրնան պատասխա-
նել նմա թէ՛ «բժիշկ, բժշկեալ նախ զանձն քո»:

Ժպտեան մի ոտանաւոր էր սկսել, բայց դեռ
չէր պարզագրել, և ոտանաւորի առաջին երկու
առուն այս էր:

Ի Բաքեւն տիպ դժոխոց՝
վառեալ վառի անորակ բոց,
Որ ոչ պագցէ երկիր կռոց՝
իսկոյն անկցի յանշէլ հնոց:

Աւաղ աւաղ՝ ազգ Արամեան՝
յոխորտաձայն, այժմ անձայն՝
եմ լալի, այլ դու ողբալի:
Կերպաւորիչն իդէայի՝
զտեսակաւ պարագայի,
Ոգւոց ոգել զոգւոյ տեսակ՝
արտաքոյ է ֆիզիգայի: Աւաղ և այլն:

Ներսէս վարդապետն այս թուղթն ծալեց, և
դրեց ծոցն և ասաց. այս այն ժամանակ կը դար-
ձուցանեմ քեզ՝ երբ կը հանդիպինք իրերաց
միւսանդամ Եփրեմի դահլիճն: Իւ այսպէս այն
ոտանաւորն կորաւ. միայն երկու տունն՝ որ
գրեւոյ ժամանակն միտքն էր պահել մնացին, և
միւս օրն Ներսէս Աբուղաւրեան տէր Մովսէսին
յանձնեց, որ Սերոբէի հետ ուղեկից լինի և ան-
ցուցանէ Կովկասու լեռներէն, և հասուցանէ
մինչև Մոզդակ. և այսպէս պատճառ դառաւ
որ հայրս Տփլիսէն ելաւ և զնաց Եփրեմի վի-
ճակն ի Ռուսաստան, ուր և հասաւ Եփրեմին ի
Ղլար քաղաքի:

ՇԵՐՈՒՆԻ ԴԱՐՈՒՆԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ
(Շարունակեցի):

Մեր կողմանէ չեմք վարանիր զուրկելու թէ
հնդկահայոց մեծագոյն մասն գիտնականն և կեն-
ցաղագէտ անձինք են . ունին մէջերին և մի
քանի յոյժ գրագէտ ու հայկաբան քահանայք,
որք ցաւօք սոտի կըմեղագրեն Կ. Պոլսոյ եկե-
ղեցական և աշխարհական գրագէտներն իբրեւ
խանգարիչ և մահացուցիչ մեր պատուական
գործարք լեզուին , և «ձայներն բողոքեն ու
տրտունջներն երթալով կըբարձրանան . . . և
ոմանք ալ դաւնապէս կըբողոքեն և դարման
կըպահանջեն» . Միթէ ԼՈՅՍՆ կրնայ ուրանալ
հնդկահայոց այս գանգատանաց օրինաւոր և
ազգասիրական զգացմանց արդիւնք լինելն .
Բայց դժբաղդարար , ինչպէս Թուրքաստանի
նոյնպէս և Հնդկաստանի Հայոց մէջ կըբայրի-
րութիւնն և համաձայնութիւնն է որ կըպակսի-
որով ամեն տեղ Հայ ժողովուրդն փոխանակ
յառաջող իսկելոյ , յետո ընդ կրունին դառնայ .

Կ. Պոլսոյ ՕՐԱԳԻՐ Թերթն իւր թուոյն մէջ որ
'ի 22 Յետեմբերի , կըսէ թէ «Իսկիւտարի
մէջ (Կ. Պոլիս) բողոքականաց դէմ կրօնական
վիճաբանութիւն մը բացուած էր , որու եթէ
առաջըք չառնուելով թողուէր որ տարածուի
հետեւանք ծանր էր» .

—Դարձեալ Կ. Պոլսոյ ՓՈՒՆՁ Լրագիրն իւր
թուոյն մէջ որ 'ի 24 Յետեմբեր , Տիվրիկ քա-
ղաքէն գրեալ երկար նամակ մի կըհրատարակէ ,
որ այսպէս կըսկսի .

«Արջք օրհասականք հզօրագոյն կուրին . ըստ
այսմ և Թէոդորոս վարդապետ իւր անկումը
մերձ գուշակելով , իւր անիրաւութեան զէնքե-
րն առ անմեղ ազգայինս դարձուցած զանոնք
չարաչար կըլլէ և փեռեկտէ» .

—Վաղարշապատէն Թիֆլիզի ՄՇԱԿ Լրագրոյն
հետեւեալ ցաւոյնչափ կըհաղորդեն .

«Օգոստոսի 5ին երեսուն հոգի Սամաղար գիւ-
ղիցը , որ Ս. Էլմիածինց հինգ վերստ հեռու է ,
և տան հոգի վաղարշապատից , կամենալով
թողնել Հայ Լուսաւորչական կրօնքը և ընդու-
նել Լուսերի դաւանութիւնն , ներկայացուցին
Էլմիածին պօլիցիական կառավարութեան , յա-
նուն Նորին կայսերական Բարձրութեան փոխար-
քայի Կովկասու խնդիրք վաւերացնելու համար
Սամաղարցիք 1871 թւիցը աշխատում են այդ
գործի մասին , բայց դրանց առաջուայ խնդիրք-
ները անկանոն լինելով միշտ թողում էին ան-
կատար . իսկ այս անգամին պօլիցիան պարտա-
ւոր էր վաւերացնել . որ և կատարեց» .

—Ելքեմք թէ Բուսէլի երկաթուղեաց վեր-
ջին վիճակահանութեան առաջին պարգէնն որ
300.000 ֆրանք է , Կ. Պոլսոյ Օրմագէոյը բնա-
կող մեծա . Շալհիեան Պետրոս էֆէնտին շահեր
է . և կըհաւատեն թէ այս բաղդաւոր համադ-
րին մեր նոյն երկաթուղեաց բաժնէտոմսերէն
միայն 30 հատ ունի եղեր :

Յայտնի է թէ յիշեալ երկաթուղեաց նախըն-
թաց վիճակահանութեան առաջին պարգէնն եւս
որ 600.000 ֆրանք էր , 'ի Կ. Պոլիս հաստատեալ
Կեսարացի Հայ մի շահեցաւ , այսինքն մեծա .
Ագաթան էֆէնտին թահտապուրուեան :

Ոչ սակաւ միւրթարութեան և ուրախութեան
արժանի կըհամարուիք 2—3 ամսուան մէջ տեղի
ունեցած . Բաղդին այս երկու յաջող գէպքն , որ
գուցէ բարեգուշակ նշան մի ինի ազգային ձա-
խորդութեան 'ի բարեբաղդութիւն փոխվելուն :

ՔԱՆԱՔԱՆ ԿԱՌԻՐԵՐ

Զմիւռնիա , 4 Հոկտեմբեր :

Կ. Պոլիսէն հասած պաշտօնական լուրերն կը-
ծանուցանեն թէ Բարձրագոյն Դուռն որոշած է
տէրութեան ներքին և արտաքին փոխառու-
թեանց տոկոսաց և գլխավճարին կէան միայն
վճարել մինչև հինգ տարի : Իսկ փոխառուաց
կամ պարտատէրանց այս վնասը փոխարինելու
համար , տարին հարիւրին 5 տոկոս պիտի հա-
տուցանէ նոյն հինգ ամաց համար 'ի վերայ ան-
վճար տոկոսեաց : Այսինքն տէրութեան որ և է
տեսակ պարտամուրհակ ունեցողներն , նոյն
պարտամուրհակոց տեղափոխ կէան պատրաստ

դրամով պիտի ընդունին , և կէան տարին հա-
րիւրին 5 տոկոս բերող տէրութեան պարտա-
մուրհակներով :

—Հանգիստ ընդհանուր կառավարիչ բարձ-
րապատիւ Էսաա փաշան յանցելով չարաթու
հաճեցաւ այցելութիւն ընել ինչպէս Յունաց և
Հրէից ազգային վարժարանաց , նոյնպէս և Մես-
սոպեան ու Հռիփսիմեանց մեր ազգային վար-
ժարանաց , և մարդասիրական յորդորներով
քաջալերեց զսեսուն և զգլխաւոր վարժապետ-
ները կրկնապատկել իրենց ջանքը 'ի բարոյա-
կան և յուսումնական յառաջադիմութիւն ա-
շակարտաց և աշակերտութեաց :

Նորին Բարձրութիւնն աչքէ անցունելով նաեւ
քաղաքիս օսմանեան վարժարաններն , հարկ հա-
մարեցաւ նոցա թիւն աւելցնել և բարեկարգու-
թիւնն զարգացնել նոցա մէջ : Բարձրապատիւ
Էսաա փաշան այս ազգագուտ գործոյն հոգա-
տարութիւնն մեծաշուք Հայտար էֆէնտինին
յանձնեց , որ մեր վիլայէթին ուսումնական խոր-
հրդոյն նախագահն է :

—Մեր բարձրա . կուսական այս շարժու բա-
րեհաճեցաւ փոխադարձ այցելութեան երթալ
գերա . մենեյնէօր Սաքաբարիէթրա Արքեպիս-
կոպոսին , որ իզմիրի վիճակին հոռմէական ժո-
ղովրդոց Առաջնորդ է :

—Եգիպտոսի բարեխնամ Առաջնորդ գերա-
տէր Մեսրուպ Ս. Արքեպիսկոպոսն , որ քանի մը
ամսոց հետէ 'ի Կ. Պոլիս կըգտնուէր , անցեալ
ամսոյ 27ին շարաթ առաւօտուն աւստրիական
չողենաւով հասաւ 'ի քաղաքս , և երեկոյն
չարունակեց զճանապարհորդութիւն իւր յԱլէք-
սանդրիա երթալու :

Նորին Սրբազնութիւնն 'ի պատճառս անձ-
նական փոքրիկ տկարութեան , չկրցաւ 'ի ցամաք
եւանել . բայց բաղումք յազգայնոց մերոց փու-
թացան երթալ 'ի չողենաւն 'ի տեսութիւն
յիշեալ պատուական հոգեւոր Հովուին :

—Քաղաքիս ԱՄԱՆԻԱ անուն յունարէն լրա-
գիրն իւր թուոյն մէջ որ 'ի 1 ամսոյս , հետեւ-
եալ կըհրատարակէ :

«Կըսուի թէ Բարձրագոյն Դրան արտաքին
գործոց նախարարն այս օրերս չըջաբերական
նամակ պիտի յուղարկէ օտար տէրութեանց
դեսպանաց , ծանուցանելով նոցա Շուրայի Տէվ-
լէթին որոշումն , որով օտար հպատակ մի պիտի
չկրնայ ժառանգորդ լինել օսմանեան հպատա-
կի , թէ և նոյնին մտաւոր յոյժ ազգական լինի
նա , Այս կանոնն 'ի գործ պիտի դրուի մանա-
ւանդ վստ օտար հպատակ դաւակց կնոջն որ
օսմանեան հպատակութիւնն ընդունած է , որ-
պէսզի կարող լինի անշարժ ստացուածք գնել
թուրքիոյ մէջ» .

«Սակայն «Էֆէնթի Էլիթի» լրագրոյն ընդունած
տեղեկութեանցը համեմատ օտար դեսպանա-
տանց շատերն ընդգիմութիւն պիտի ցուցնեն
այս որոշմանը . որովհետեւ բաղձմութիւ օտար հը-
պատակք պիտի զրկուին , յանշարժ ստացուածոց
իւրոյ , որք արձանագրեալ են յանուն իրենց
կանանց կամ իրենց մարդ , օսմանեան հպատակ
եղելոյ : Հետեւաբար այն անշարժ ստացուածքն
պիտի վերագաւնան օսմանեան տէրութեան
զկնի մահուան այն անձին , որոյ անուանն այժմ
գրեալ են» .

—Կ. Պոլսոյ ԼՊՅՍ հանդիսին թիւ թիւ կըհրա-
տարակէ թէ «Զմիւռնոյ մէջ քանիցս ապօրինի
պաւլներ ձեւայնոց կարապետ քահանայն Բ .
Դրան միջոցաւ մայրաքաղաքս բերուելով ազգ-
ային Պատրիարքարանի յանձնեցաւ» .

Հարկ կըհամարուիք ծանուցանել թէ ԼՈՅՍՆ
փաւումաք կարապետ կանուանէ զյիշեալ քա-
հանայն . որուն անունն Յօհաննէս է Ամասիայի ,
որ բաւական ժամանակ կամեցաւ պանդխտու-
թեամբ մնալ 'ի քաղաքս , թէ և թոյլտուութիւն
չունէր քահանայազորութիւն ընելու :

—Կալկաթայէն կըգրեն մեզ թէ գերա . տէր
Գրիգորիս արքեպիսկոպոս որբազան Առաջնորդն
Հայոց Պարսկաստանի և Հնդկաստանի ողջամբ
հասեր է 'ի յիշեալ մայրաքաղաքն և արժանա-
ւոր յարգանք ընդունուէր է :

Նորին Սրբազնութեան ժամանաւոր պարագայից վրա-

յօք ընդարձակ նամակ մի ընկալաք երէկ , զը
լրագրոյս յաջորդ թուով պիտի հրատարակուի
—Այս առաւօտ հորիզոնն ամպամած է և
անձրեւ կըյուսացուի . յորմէ ոչ սակաւ հարկա-
ւորութիւն ունի երկիրը :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Բամպակին այսօրուան գինն 395—400 դու-
րուշ է կենդինարն , մեքենայով մաքրուած ապ-
րանքին համար և 'ի հանդարտութեան գտանի
Աֆիօնին հունձն թէ և 'ի սկզբան շատ առաւ-
կարծուեցաւ , սակայն հաստատուն է թէ 5000
5500 կողովի հազիւ թէ պիտի հասնի . այս պատ-
ճառաւ գիններն հետզհետէ կըբարձրացան : Այս
օրուան արժէքն 145—150 դուրուշ է չէքին և
հակամէտ ևս առաւել բարձրանալոյ :
Փալամուտն ևս դիւրաւաճաւ է , և չա-
ռած ապրանքին գինն 90—110 դուրուշ է վի-
դինարն ըստ տեսակին :

ԾԱՆՈԹՅՈՒՆ

Զմիւռնոյ քարափանց (քէ) ընկերութիւնն ի-
մաց կուտայ այն անձանց որք կըփափաքին գը-
նել հողով լցուած իւր գետիններէն (արտա) , թէ
անոնցմէ որ և է վաճառում մի ընելէ ետեւ կա-
րող է տալ աւանդել գնողաց 'ի ձեռնհաս իւ-
խանութենէ կառուածական վիլայադիր (հետ-
ճէթ) , թէ Միւլք և թէ Վաքըֆ :

Զմիւռնա , 23 Մեպ . (5 Հոկ .) 1875

Իմաց կըտրուի հասարակութեան քէ մեծա . տոքթ
Չալեան բժիշկի կըբեկի հաճի Զիրօյի փողոց Սի-
լին պանդոկին բովի տունը . ուր ամեն օր՝ զկնի
սաւուր ժամը 2ին մինչեւ 3 ըստ Փրանկաց , այցելու-
քիւն կըմատուցանէ իրեն դիմող հիւանդաց :

Ըստ խնդրոյ միոյ 'ի բարեկամաց մերոց ձա-
վայու (որ 'ի Հնդկաստան) , պարտ անձին հա-
սարկաք հրատարակել զհետեւեալ

ՅԱՅՏԱՐՍՈՒԹԻՒՆ

Յարգւոյ խմբագիր ,

Յամի Տեառն 1868 , պարոն Աբրահամ Եր-
Աւետ մահտեսի Յովհաննէս Եղիաղարեանց քա-
ռայր իմ , որ վարէր յայնժամ՝ պաշտօն 'ի հ-
ռագրատան իսպահանայ , գտանէ պատուէր
թէհրանայ 'ի Հայ վաճառականէ ումեմէ և յի-
տանուոյ իւրմէ՝ գնել և առաքել նմա ապրան-
ք և փոխանակ արժէից ապրանոցն քարշէլ փո-
խանակադիր 'ի վերայ իւր : Պարոն Աբրահամ
կատարէ զպատուէր վաճառականին թէհրան-
ոյ՝ որպէս ասենն , գրեալէ 'ի փոխանակադիր
զընդունելութիւն իւր . այլ նախքան զլրաց-
պայմանաժամուն հասուցման՝ անանկադիւ-
չկարէ պատուել զայն , Զփոխանակադիրն յո-
առաքեն յիսպահան , և պարոն Աբրահամ
եալ զի կառավարութիւն Պարսից՝ յորոյ գ-
ձատանէն ընկալեալ էր զգումարն՝ յիւրմէ պ-
հանջեցէ զգումարն , մեկնի յիսպահանայ գ-
'ի թէհրան , Յետ այնորիկ լսեն ընտանիք նո-
թէ հասեալ է նա 'ի թէհրան . բայց և ան-
ելանէ անուր . Սակայն մինչև ցայսօր չգիտ-
թէ ուր իցէ նա , կամ զինչ պատահեալ է
Արդ՝ քանզի այլ ամենայն ջանք մեր վստ գ-
նելոյ լուր ինչ զմանն 'ի դերեւ ելին , խնդ-
զի շնորհ արարեալ հրատարակելովք զմե-
յաշխարհածանօթ Արշալ՝ լրագրի ձեռն-
թերեւս ոմանք 'ի մարդասէր ընթերցողաց
րոց գիտնցեն ինչ զյիշեալ պարոն Աբրահամ
կամիցին հաղորդել ինձ զայն : Եւ ես խոս-
նամ , զի որ ոք յայտնեցէ զհաւատար իմ
զկենդանութենէ կամ զմահուանէ նոցա ,
'ի բազում շնորհակալաց , ընկալցի ինչէն
արժանի պարգև մի :

Բուրխիւնգ (Ճափա) 8 Մարտի 1875

Գասպար տէր Գալստիան

Խմբագիր—տէր Լրագրոյս
Գ. Է. Գ. Պալատի

Ի ՏՊԱՐՍՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՅՈՅ ԱՐԱՐՍՏԵՍ